

Նիկալայ Պետրովիչը իւր կնոջն էր կորցրել, Պաւէլ Պետրովիչը՝ իւր լիշողութիւնները. իշխանուհու մահուանից լետոյ աշխատում էր նրա վրայ չմտածել: Բայց Նիկալայի մէջ կար կանոնաւոր անցկացրած կեանքի զգացմունքը և որդին էլ իւր աչքի առաջ մեծանում էր, իսկ Պաւէլը, ընդհակառակն, մեռակեաց ամուրի լինելով, ոտք էր դնում ալն անորոշ, աղջամղջալին ժամանակի մէջ, ժամանակ փոստաւանքների, որ նման են լոլսերի, լոլսեր, որ նման են փոստաւանքների, երբ երիտասարդութիւնն անցել է, իսկ ծերութիւնը դեռ չէ կոխել:

Այդ ժամանակն ոչ ոքի համար ալնքան ծանր չէր, ինչքան Պաւէլ Պետրովիչի համար՝ ահեղալը կորցրած լինելով, կորցրել էր ամեն բան:

— Ես ալժամ քեզ Մարինո չեմ հրաւիրում, — Նիկալայ Պետրովիչը մի անգամ առանց նրան (իւր գիւղի անունը իւր կնոջ անունովն էր դրել), — դու հանգուցեալի կենդանի ժամանակն էլ ձանձրանում չէի, իսկ ալժամ հո կարծում եմ ձանձրութից կմեռնես:

Թեան տարի էր: Փրանսիայում, 1789 թ. առաջին մեծ լեղափոխութիւնից և հասարակապետութիւն հաստատուելուց լետոյ 1848 թ. փետրուարին տեղի ունեցաւ երկրորդ լեղափոխութիւնը և երկրորդ հասարակապետութեան հաստատութիւնը: Նոյն թուի մարտին լեղափոխութիւն եղաւ Վերմանիայում. 1848—1849 թթ. Աւստրիան ոչնչանալու մեծ փոսանդի մէջ էր. որովհետեւ երկրի գերմանացիներն ուղում էին միանալ Վերմանիային, Ռուսական նահանգներն ապստամբած սնկախութեան համար չէին կուում և ուղում էին միանալ Ռուսիայի միւս մասերի հետ, որոնք նոյնպէս ազատութեան համար մեծ խլրտման մէջ էին. Հունգարիան անկախ էր իրեն հրատարակել. չեխերը, լեհացիներն ապստամբել էին, միւս սլաւ ցեղերը նոյնպէս դուրս էին բարձրացրել: Նոյն թուին Նիդերլանդիայում նոր սահմանադրութիւն հրատարակուեցաւ. Ձուլիցերիան փոխանակ պետութիւնների զաշնակցութեան, դարձաւ զաշնակցական պետութիւն. Բելգիայում լեղափոխութիւնը մեծ ծաւալ չստացաւ շնորհիւ ժամանակի առաջադէմ միւնիստրութեան. Սլաւոնիայում հասարակապետականների լեղափոխութիւն եղաւ, Իրլանդիայում ապստամբական շարժում առաջացաւ, մինչև անգամ Անգլիայում բանուորական խնդիրը, թէպէտ խաղաղ ընթացքով, լաշողուեցաւ: Յեղափոխական շարժումից դերծ չմնացին նաև բալկանեան աղղերը և լոլները:

Ծ. Թ.

— Նա այն ժամանակն իմար էի ու անհանգիստ, — պատասխանեց Պաւէլ Պետրովիչը, — նրանից դէսը խեղճ գլուխս է եկել, հանդարտուել եմ: Այժմ, ընդհակառակն, եթէ թող տաս, առ միշտ պատրաստ եմ քեզ մօտ ապրելու:

Նիկալայ Պետրովիչը պատասխանելու փոխարէն զրկեց նրան, համբուրեց. բայց մինչև Պաւէլ Պետրովիչը իւր ալդ մը տաղրութիւնը կ'դործադրէր, տարիու կէսուանից աւելի ժամանակ անցաւ: Բայց դրա փոխարէն էլ մի անգամ զիւղ փոխադրուելուց լետոյ ալ ևս դիւղից չհեռացաւ, մինչև անգամ այն երեք ձմեռները, երբ Նիկալայ Պետրովիչը Պետերբուրգ, որդու մօտ անցկացրեց, Նա սկսաւ ընթերցանութեամբ պարապել, կարդում էր աւելի անգլիներէն դուռածքներ. և առհասարակ նա իւր բոլոր կեանքը անգլիական ճաշակով սարքեց, հարեանների հետ հաղու էր հանդիպում և միայն ընտրութիւնների մասնակցելու համար էր դուրս գնում, և ընտրութիւնների ժամանակն էլ նա մեծ մասամբ լուռ էր մնում, բայց մէկ մէկ միայն իւր ազատամտական վարմունքներով զրդուում ու վախեցնում էր հին կարգի կալուածատէրերին, իսկ նոր սերունդի ներկայացուցիչների հետ չէր միանում: Թէ մէկը և թէ միւսները նրան գոռոզ մարդ էին համարում, թէ սրանք և թէ նրանք նրան լարգում էին իւր ազնուական զերազանց շարժումների, նրա տարած լաղթանակների մասին տարածուած լուրերի պատճառով, ալ և այն պատճառով, որ նա շատ լաւ հազնուում էր և միշտ լաւ հիւրանոցի ամենալաւ սենեակումն իջնում, որ առհասարակ լաւ ճաշ էր ուտում, իսկ մի անգամ էլ նոյն իսկ Լուի-Ֆիլիպպի մօտ Վելլիգտոնի հետ էր ճաշել, որ ամեն տեղ իւր հետ տանում էր իսկական արծաթէ նետսետէրըն ու ճանապարհի լողարան. որ միշտ վրաից մի տեսակ անսովորական, զարմանալի «ազնիւ» օծանելիքների հոտ էր դալիս, որ շատ վարպետ վիստ էր խաղում ու միշտ էլ տանուլ էր տալիս. վերջապէս նրան լարգում էին նաև նրա անբասիր ազնուութեան համար: Կանաչք նրան զմալլելի մեղամաղձիկ էին անուանում, բայց նա կանանց հետ ծանօթութիւն չուներ:

— Տեսնո՞ւ, Եւգենի, — ասաց Արկադիյն իւր պատմութիւնն աւարտելով, — ինչքան անիրաւ կերպով են դատում հօրեղբօս: Ել չեմ ուզում լիշել, որ նա քանի քանի անգամ հօրս աղատել է նեղութիւնից, իւր ունեցած բոլոր փողը տուել է նրան, — իսկ կալուածքը, դուցէ դու չես էլ իմանում, որ դեռ բաժա-

Նաձ չեն,—նա պատրաստ է ամէն մի մարդու էլ օգնելու և, ի միջի ալոց, միշտ գիւղացոց կողմն է բռնում. ուղիղ է՝ նըրանց հետ խօսելիս դէմքը կնճռոտում է և օղբկոլոն է հոտոտում:

—Անշուշտ. նեարդերն են գրգռուում,—ընդհատեց Բաղարովը:

—Գուցէ. բալց շատ բարի սիրտ ունի. Եւ շատ էլ խելօք մարդ է: Ինչպիսի օգտակար խորհուրդներ է տուել ինձ... մանաւանդ կանանց հետ վարուելու վերաբերմամբ: Չալ օձ տեսնողը՝ չալ չաթուից կ'վախենալ. Գիտենք:

—Դէ, մի խօսքով,—շարունակեց Արկադիւն,—Նա խիստ անբաղդ է, հաւատա խօսքիս. լանցանք է նրան արհամարհելը:

—Ո՞վ է նրան արհամարհել, —պատասխանեց Բաղարովը.— Բալց ես դարձեալ պիտի ասեմ, որ մի մարդ, որ իւր բոլոր կեանքը կանացի սիրով հետ է կապել, և երբ ալդ կապը կրտրուելով նա թթւում է ու մինչ ափն աստիճանի ընկնում, որ ոչ մի բանի պիտանացու չի լինում, ալդպիսի մարդը-տղամարդ չէ, արու չէ: Ասում ես, թէ դժբաղտ է. իհարկէ, դու ալդ բանը աւելի լաւ կարող ես իմանալ. բալց նրա գլխից դեռ բոլոր հոպոպները չեն դուրս եկել. Հաւատացած եմ, որ նա արդարև իրեն գործի հմուտ անձն է համարում, որովհետև Գալինիանիի լրագիրն է կարդում և ամիսը մի անգամ էլ գիւղացուն մարմնական պատժից ազատում:

—Յիշիր նրա ստացած դաստիարակութիւնը, ափն ժամանակամիջոցը, երբ ապրում էր, —նկատեց Արկադիւն:

—Դաստիարակութիւնը, —վրալ բերեց Բաղարովը.— Ամեն մարդ պարտաւոր է ինքը իրեն դաստիարակել,—ալ, հէնց ես օրինակ. իսկ ինչ վերաբերում է ժամանակին, ինչո՞ւ պէտք է ես նրանից կախուած լինեմ: Աւելի լաւ է, թող նա ինձանից կախուած լինի: Չէ, եղբալր, ալդ ամենը մեղկութիւն է, դատարկութիւն: Եւ թնչ խորհրդաւոր լարաբերութիւն կարող է լինել տղամարդու և կնոջ մէջ: Մենք, բնախօսներս գիտենք, թէ ալդ ինչ լարաբերութիւն է. Հապա մի աչքի կազմութիւնը ուսումնասիրի, ալդ տեղ թնչ գործ ունի, ինչպէս դու ես ասում, խորհրդաւոր հալեացքը: Ալդ բոլորը լոկ ումանտիզմ է. բոջ բան, փտած բան, գեղարուեստ: Աւելի լաւ է գնանք բրդէզը գիտենք:

Եւ երկու բարեկամ վեր կացան: Բաղարովի սենեակը գնացին, ուր արդէն իսկ մի տեսակ բժշկա-անդամահատական

հոտ էր տիրել, որ խառնուել էր էփանագին ծխախոտի հոտին։

VIII

Պաւէլ Պետրովիչը եղբոր և կառավարչի խօսակցութեանը երկար ժամանակ ներկայ չեղաւ։ Կառավարիչը բարձրահասակ, նիհար, թոքախտաւորի ձախով ու խարդախ աչքերով մի մարդ էր և Նիկալայ Պետրովիչի ամեն մի նկատողութեանը պատասխանում էր «*ինչ խօսք, լալտնի բան է*», և աշխատում էր գիւղացիներին արեւցող ու դող դուրս բերել։ Դեռ վերջերքս կազմակերպած նոր ձևի տնտեսութիւնը ճրճուում էր, ոնց որ իւր չքսած անիւ, ճռնչում՝ որպէս խամ փալտից տանու շինած կարասիք։ Նիկալայ Պետրովիչը չէր լուսահատուում, բայց լաճախ հառաչում էր ու մտքի մէջ ընկնում — զգում էր, որ առանց փողի բան առաջ չի գնալ, իսկ ունեցած փողը համարեա բոլորն էլ մսխուած էր։ Արկաղիչն ուղիղն էր ասել — Պաւէլ Պետրովիչը քանի քանիցս օգնել էր եղբորը՝ քանի քանիցս տեսնելով, թէ ինչպէս եղբայրը չարչարուում էր, դէս ու դէն ընկնում աշխատելով մի ելք գտնել, Պաւէլ Պետրովիչը ծանր քալելով մօտեցել էր պատուհանին և ձեռները զրպանը զրած, ատամների արանքից փնթփնթացել «*mais je puis vous donner de l'argent*», **) և նրան փող էր տուել։ Բայց այդ օրը նա ինքն էլ փող չուներ, ուստի լաւ համարեց հեռանալ, տնտեսական գլխացաւանքը նրան ձանձրութիւն էր պատճառում։ մանաւանդ որ նրան միշտ թւում էր, թէ Նիկալայ Պետրովիչը, չնայելով իւր եռանդին ու աշխատասիրութեան, զործը ինչպէս որ պէտքն է, ալնպէս չի տանում, թէպէտ ինքն էլ կարող չէր ցոյց տալ, թէ որն է Նիկալայ Պետրովիչի սխալը։

«Նղբալը, — մտածում էր նա, — զործնական մարդ չէ. նըրան խաբում են»։ Իսկ Նիկալայ Պետրովիչը, ընդհակառակն, մեծ համարում ուներ Պաւէլ Պետրովիչի զործնական մարդ լինելու վրայ և միշտ նրանից խորհուրդ էր հարցնում։ «Սա կակուղ, թող մարդ եմ, ողջ կեանքս խուլ անկիւնում եմ անցկացրել, — ասում էր նա, — իսկ դու իզուր չես հո մարդկանց մէջ երկար ապրել, նրանց շատ լաւ կճանաչես. դու արծուի հալեացք ունես»։ Պաւէլ Պետրովիչը ի պատասխանի այս խօսքերին շուռ էր գալիս, բայց եղբոր կարծիքը չէր աշխատում փարատել։

Նիկալայ Պետրովիչին առանձնասենեակում թողնելով, նա անցավ միջանցքով, որը տան առաջին մասը զատում էր չեռին բաժնից և, ցածրիկ դրանը հաւասարուելով, մտախոհութեամբ կանգ առաւ, բեխերը ձգեց ու բաղխեց դուռը:

— Ո՛ր է, մտէք:— լսուեց Ֆենիչկայի ձայնը:

— Յս եմ, — ասաց Պաւէլ Պետրովիչը և ներս մտաւ:

Ֆենիչկան վեր թռաւ աթոռից, որի վրայ երեխան նըստած էր և, երեխան տալով աղջկայ ձեռքը, որը նրան իսկոյն սենեակից դուրս հանեց, շտապով գլխի շորը շրտկեց:

— Ներեցէ՛ք, թէ որ խանգարեցի, — սկսաւ Պաւէլ Պետրովիչն առանց նրա երեսին մտիկ տալու, — ես միայն ուզում էի ձեզ խնդրել... կարծեմ արտօր մարդ են ուղարկում քաղաք... հրամայեցէ՛ք, որ ինձ համար կանաչ թէյ գնեն:

— Շատ բարի, — պատասխանեց Ֆենիչկան. — Ինչքան կ'ուզէք:

— Մի կէս ֆունտ առնեն հերիք է կարծեմ, Ալստեղ, ձեր սենեակում ինչպէս տեսնում եմ փոփոխութիւն է եղել, — ակաջրեց նա արագ հալեացք ձգելով չորս կողմը և Ֆենիչկայի դէմքի վրայ. — Ահաւասիկ նոր վարագոյրներ ունիք, — ասաց նա տեսնելով, որ Ֆենիչկան իւր ասածը չի հասկանում:

— Այո, նոր են. Նիկալայ Պետրովիչը մեզ նուիրեց, և վաղուց է, որ կախ է տուած:

— Ասենք ես էլ վաղուց է ձեր սենեակը մտած չեմ: Այժմ շատ լաւ է սարքած:

— Նիկալայ Պետրովիչի շնորհիւ: — չնչաց Ֆենիչկան:

— Ալստեղ աւելի լաւ է, քան թէ առաջուայ տանը: — հարցրեց Պաւէլ Պետրովիչը քաղաքավարութեամբ, բայց առանց ժպտի:

— Իհարկէ լաւ է:

— Այժմ ո՛վ է ձեր տեղը:

— Լուացք անող կանալքն են:

— Հը՛:

Պաւէլ Պետրովիչը լռեց. «հիմա կ'գնալ» մտածեց Ֆենիչկան: Բայց նա չէր գնում և Ֆենիչկան արձանի նման կանգնած էր նրա առաջը, թեթեակի մատները շարժելով:

— Ինչո՞ւ ասացիք, որ ձեր փոքրին դուրս հանեն, — խօսեց վերջապէս Պաւէլ Պետրովիչը. — Յս երեխայ սիրում եմ: Հապա մի ցոյց տուէ՛ք:

Ֆենիչկան շփոթուելուց և ուրախութիւնից բոլորովին կարմրատակեցաւ: Նա Պաւէլ Պետրովիչից վախենում էր՝ — սա համարեա երբեք նրա հետը չէր խօսում:

— Դունիաչա, — կանչեց նա, — հապա մի Միտիաիւն րե-
րէք: (Ֆենիչկան տանը ամենքի հետ էլ դուքով էր խօսում):
Կամ թէ չէ, սպասեցէք, պէտք է շորերը փոխել: — Ֆենիչկան
դէպի դուռը դնաց:

— Վնաս չունի, — նկատեց Պաւէլ Պետրովիչը:

— Այս բոպէին, — պատասխանեց Ֆենիչկան և արագ
դուրս գնաց:

Պաւէլ Պետրովիչը մենակ մնաց և ալս անդամ առանձին ուշադրութեամբ դիտեց սենեակը: Դա մի փոքրիկ, ցածիկ սենեակ էր, որ շատ մաքուր էր ու խալտիկ, Սենեակի լատակը նոր էր ներկած և ներկի հոտը խառնուած էր երիցուկի ու խնձաղեղի հոտի հետ: Պատերի երկարութեամբ շարած էին քնա-
րած և մէջքով աթոռներ: Այդ աթոռները դեռ հանգուցեալ դե-
ներալն էր գնել Լեհաստանում, արշաւանքի միջոցին, մի ան-
կեանը դրած էր մանկական մահճակալ շղարչեալ վարագործով սքողած՝ կողքին մի երկաթապատ սնդուկ բոլորակ խուփով, հանդիպակաց անկեանը Նիկողայոս Հրաչագործի մեծ, սեւ-
ցած պատկերի առաջ կանթեղ էր վառած. սուրբի կրծքին կախած էր լախճապակեալ մի փոքրիկ ձու, որի կարմիր ժա-
պաւէնը սրբի ճառագայթներին էր կպցրած. պատուհանների մէջ շարուած էին անցեալ տարուալ եփած մուրաբաները, ո-
րոնց ապակեալ բղուղները կանաչ գոյն էին ստացել, բղուղ-
ների բերանին հողածութեամբ կապած թղթէ բոլորակների վրայ Ֆենիչկան ինքը իւր ձեռքով խոշոր տառերով գրել էր: «կրու-
ժովնիկ»: Նիկալալ Պետրովիչն աւելի ալս մուրաբան էր սիրում: Առաստաղից երկալն երիզով կախ արած վանդակի մէջ փակած էր մի պոչատ դեղձանիկ, որ շարունակ թռչկոտում էր ու ճռու-
ղում. իսկ վանդակը անդադար օրորւում էր ու զոզոզոզում, որից կանեփի սերմերը թեթեւ չրխկոցով ընկնում էին լատակի վը-
րալ: Երկու պատուհանի արանքում, պահարանից վերեւ, պա-
տի վրայից կախած էին Նիկալալ Պետրովիչի բաւական անա-
ջող լուսանկար պատկերները, զանազան դիրքով նկարած, որ
մի պատահական լուսանկարիչ էր պատրաստել. այդ տեղ էր
կախած նաև հէնց Ֆենիչկալի պատկերը, որ խիստ անաջող
էր դուրս եկած՝ — մի ինչոր աչագուրկ դէմք լարուած ժպտում

էր սև շրջանակի միջից— ուրիշ ոչինչ կարելի չէր ջոկել: Իսկ Ֆենիչկալի վերեւ կախած էր եսփնջաւոր Երմոլովը, որ դէմքը կ'ընծոտած, ահարկու հալեացքն ուղղած Կովկասեան հեռաւոր սարերի վրայ, նալում է մի մետաքսեալ ոտնամանի տակից, որ լատկացրած է դնդասեղի և կախ էր ընկած ուղիղ Երմոլովի ճակատին:

Հինգ րոպէ անցաւ. կողքի սենեակում խըշխոց ու շրջունչ էր լսում, Պաւէլ Պետրովիչը պահարանի վրայից վերցրեց մի ձիթոտած գիրք, որ Մասալսկու բաժան-բաժան արած ՄРЪНБЦЫ-ի հատորն էր, մի քանի թերթ շուռ տուաւ... Դուռը բացուեցաւ և Ֆենիչկան, Միտեան գրկին ներս մտաւ: Նա երեխային հագցրել էր կարմիր շապիկ, որի ձեռքին ոսկէթել ժապաւէն էր կարած, մաղը սանրել, երեսը լուացել, երեսան ծանր շունչ էր առնում, ամբողջ մարմնով առաջ սլանում ու թաթիկները շարժում, ինչպէս որ անում են բոլոր առողջ երեխաները: Բայց ինչպէս երևում է շքեղ շապիկը նրա վրայ ներդործել էր—գոհութեան զգացմունքը երևում էր նրա բոլոր փափրիկ կերպարանքի վրայ: Ֆենիչկան իւր մազն էլ էր շտկել և գլխի ծածկոցն էլ կարգի բերել, բայց նա կարող էր ինչպէս որ էր, աչնպէս էլ մնալ: Եւ ճշմարիտ, միթէ աշխարհիս երեսին կալ մի բան, որ աչնքան հրապուրիչ լինի, որքան նորատուի գեղեցիկ մալրը՝ առողջ երեխան գրկին:

—Մի այս տուլիկին տեսէք, — ներողամտաբար ասաց Պաւէլ Պետրովիչը և ցուցամատի երկայն եղունգի ծալքով խտուտ ածեց Միտիայի կրկնակի բուղախը, երեսան աչքը լառեց գեղձանիկին և ծիծաղեցաւ:

—Այս հօրեղբայրն է, — ասաց Ֆենիչկան երեխայի վրայ խոնարհելով և նրան թեթեակի ցնցելով, մինչ այդ միջոցին Դուռնիաշան պատուհանի մէջ, կողէկանոցի վրայ դնում էր վառած հոտաւէտ մխոցքը:

—Քանի ամսական է, — հարցրեց Պաւէլ Պետրովիչը:

—Վեց ամսական. շուտով ամսի տասնմէկին եօթը կ'մտնի:

—Ութը չպիտի մտնի որ, Ֆեդոսիա Նիկողաւնա, — քաշուելով մէջ մտաւ Դուռնիաշան:

—Ոչ, եօթը կ'մտնի. ինչպէս թէ ութը: — Երեսան նորից ծիծաղեցաւ, աչքը սնդուկին լառեց, և լանկարծ բոլոր հինգ մատներով չանչեց մօր քիթն ու շրթունքները: — Զարաճճի, — ասաց Ֆենիչկան առանց երեսը նրա մատներից հեռացնելու:

—Նղբօրն է նմանում,—նկատեց Պաւէլ Պետրովիչը, «Բաս էլ ումն էր նմանելում», մտածեց Ֆենիչկան։

—Այո,—կարծես ինքն իրեն խօսելով շարունակեց Պաւէլ Պետրովիչը,—բոլորովին նման է։—Նա ուշադրութեամբ, համարեա տխուր կերպով նայեցաւ Ֆենիչկային։

—Հօրեղբայրն է,—կրկնեց Ֆենիչկան արդէն շշնջալով։

—Հնո, Պաւէլ, ալստեղ ես եղել,—լանկարծ լսուեց Նիկալայ Պետրովիչի ձայնը։

Պաւէլ Պետրովիչը շտապով ետեւ դարձաւ և խոժոռեցաւ. բաց եղբայրն աչնպէս ուրախ-ուրախ, մի աչնպիսի երախտագիտութեամբ էր նայում նրան, որ չկարողացաւ չժպտալ։

—Շատ լաւ երեխայ ես ունեցել, ասաց նա ու ժամացոյցին նայեցաւ.—եկել էի, որ թէլի համար բան ասեմ...

Նւ, անտարբեր կերպարանք ստանալով, Պաւէլ Պետրովիչն իսկոյն դուրս դնաց սենեակից։

—Ինքն եկաւ,—հարցրեց Ֆենիչկային Նիկալայ Պետրովիչը։

—Իրանք. դուռը խփեցին ու մտան։

—Հապա Արկաշան, էլ չի եկել։

—Ձէ, Լաւ չի լինիլ, Նիկալայ Պետրովիչ, որ նորից միւս տունը փոխադրուեմ։

—Ինչո՞ւ։

—Միտք եմ անում, թէ արդեօք առ ալժմ ալդպէս աւելի լաւ չի լինիլ։

—Ձէ..., —կակաղելով ասաց Նիկալայ Պետրովիչը և ճակատը չփեց։ —Պէտք էր առաջ անել... բարեւ, տկճոր,—ասաց նա լանկարծ կենդանացած, ու երեխային մօտենալով նրա թուշը համբուրեց. լետոյ նա փոքր ինչ կուացաւ և շրթունքները կպցրեց Ֆենիչկայի ձեռքին, որը Միտիայի կարմիր շապկի վրայ կաթի նման սպիտակ էր երևում։

—Այս Բնչ էք անում, Նիկալայ Պետրովիչ,—շշնջաց նա և աչքը խոնարհեց, չետոյ կամացուկ վեր բարձրացրեց... Հրաշալի էր նրա աչքի արտալպտութիւնը, երբ որ նա կարծես թէ ունքերի տակիցն էր նայում ու փաղաքուչ և փոքր ինչ անմիտ կերպով քմծիծաղ էր տալիս։ Նիկալայ Պետրովիչը Ֆենիչկայի հետ հետևեալ կերպով էր ծանօթացել. Մի անգամ, սրանից երեք տարի առաջ, ստիպուած էր եղել դաւառական մի հեռաւոր քաղաքում մնալ ու իջևանում գիշերել. Նա ապ-

շեւ-մնացել էր տեսներով իւր սենեակի մաքրութիւնն ու անկողնու սպիտակեղէնի նորութիւնը՝ տանտիկինը հո գերմանուհի չէ, մտածեց նա. բայց դուրս եկաւ, որ տանտիկինը մօտ լիսուն տարեկան, մաքուր հագնուած, վառելակազմ, խելացի դէմքով և խոհեմ խօսակցութեամբ, մի ուսու կին էր: Թէլի ժամանակ նա խօսքի բռնուեց ալդ կնոջ հետ և խիստ հաւանեց նրան: Ալդ միջոցին Նիկալայ Պետրովիչը նոր էր իւր նոր ազարակը փոխադրուել և, չցանկանալով իւր մօտ ճորտերից պահել, վարձու մարդիկ էր փնտրում. միևնոյն ժամանակ լիշեալ կինն էլ զանգատուում էր, թէ քիչ մարդ է դալիս քաղաք, ծանր ժամանակներ են. Նիկալայ Պետրովիչը նրան առաջարկեց իւր մօտ տնտես մտնել. կինը համաձայնեցաւ: Նրա մարդը վաղուց էր մեռած և թողել էր մի աղջիկ, Ֆենիչկային: Մի երկու շաբաթից լետով Արինա Սաւինան (ալդպէս էր նրա տնտեսուհու անունը) իւր աղջկայ հետ եկաւ Մարինո և ընտելութիւն հաստատեց բակի տանը: Նիկալայ Պետրովիչը աջող ընտրութիւն էր արել: Արինան տունը կարգի ձգեց: Ֆենիչկայի մասին, որ ալդ ժամանակ տասն եօթն տարեկան էր, ոչ ոք չէր խօսում, և քերն էին նրան տեսնում՝ շատ սուս ու փուս, համեստ կեանք էր վարում, և միայն կիրակի օրերն էր, որ Նիկալայ Պետրովիչը ծխական եկեղեցում մի անկիւնում տեսնում էր նրա սպիտակ դէմքի նուրբ կիսապատկերը: Մի տարուց անելի անցաւ այսպէս:

Մի առաւօտ Արինան եկաւ նրա առանձնասենեակը և ըստ սովորականին խոնարհ գլուխ տալով հարցրեց, թէ արդեօք կարող չէ օգնել իւր աղջկանը, որի աչքի մէջ վառարանից կայծ էր թռել ընկել: Նիկալայ Պետրովիչը, ինչպէս բոլոր տնից դուրս չեկող մարդիկ, բժշկութիւն էլ էր անում և մինչև անգամ հոմեօպատիին դեղարան էր բերել տուել: Իսկոյն պատուիրեց որ հիւանդին իւր մօտ բերեն: Սրբ որ իմացաւ, թէ աղան իւր մօտ է կանչել, Ֆենիչկան շատ վախեցաւ, բայց դարձեալ մօրը ետևից գնաց: Նիկալայ Պետրովիչը նրան մօտ տարաւ պատուհանին և գլուխը երկու ձեռքի մէջն առաւ: Նրա կարմրած ու բորբոքուած աչքը մի լաւ դիտելուց լետով պատուիրեց, որ աչքին թրջած չոր դնէ, և հենց տեղն ու տեղը, թաշկինակը պատառեց ու ցոլց տուաւ, թէ ինչպէս պէտք էր ալդ բանն անել: Ֆենիչկան լսեց ասածը և ուզում էր գնալ. «Աղալի ձեռքը պաշի, լիմար», ասաց Սրին:

նան։ Նիկալայ Պետրովիչը ձեռքը չտուեց ե, չկըլուած, ինքը համբուրեց նրա խոնարհած գլխի առուն։ Ֆենիչկան շուտով առողջացաւ, բայց Նիկալայ Պետրովիչի վրայ նրա թողած տպաւորութիւնը շուտ չանցաւ։ Շարունակ նրա աչքի առաջն էր գալիս այդ մաքուր, քնքով, երկչոտութեամբ վերեւ բարձրացրած դէմքը։ Իւր բռան մէջ զգում էր այդ փափուկ մազը, տեսնում էր այդ անմեղ, մի քիչ բաց շրթունքները, որոնց արանքից արեւի առաջ թաց փալլում էին սատափի նման սպիտակ առամները։ Նա սկսաւ եկեղեցում աւելի ուշադրութեամբ դիտել նրան, աշխատում էր հետը խօսել։ Սկզբում աղջկը նրանից փախչում էր, և մի անգամ իրիկնապահին, երբ որ անց էր կենում մի նեղ կածանով, որ անցորդները բաց էին արել տերեւիով ու օշինդրով բուսած հաճարի արտի մէջից, հանդիպեցաւ Նիկալայ Պետրովիչին և որպէս զի նրա աչքին չընկնի, մտաւ բարձր ու խիտ արտի մէջ։ Նիկալայ Պետրովիչը հասկերի ոսկեգոյն ցանցի միջից տեսաւ նրա զլուխը, որ փոքրիկ գողանի նման իրեն էր մտիկ տալիս, և քնքշութեամբ ձայն տուեց։

— Բարեւ, Ֆենիչկա։ Մի վախիր, ես մարդ ուտող չեմ։

— Աստծու բարին,— չնչաց աղջկը առանց իւր թաքստից դուրս գալու։

Ֆենիչկան կամաց կամաց սկսաւ նրան ընտելանալ, բայց էլի նրա առաջ քաշւում էր, երբ որ լանկարծ մալրը խոլերալից մեռաւ։ Ո՛ւր գնար։ Նա իւր մօրիցը ժառանգել էր կարգապահութիւն, խոհեմութիւն ու ծանրաբարոյութիւն։ Բայց խիստ նորատի էր, բոլորովին մենակ։ Նիկալայ Պետրովիչը ինքն էլ խիստ բարի էր ու համեստ... Հարկ չկալ մնացածը պատմելու։

— Ուրեմն եղբայրս հէնց անպէս ուղղակի ներս մտաւ էլի,— հարցնում էր Նիկալայ Պետրովիչը։— Դուռը խփեց ու մտաւ։

— Այո։

— Այդ լաւ բան է, Հապա Միտիաիլին մի ինձ տուր, մի քիչ էլ ես խաղացնեմ։

Եւ Նիկալայ Պետրովիչը սկսաւ երեխային վեր-վեր ձգել, համարեա մինչև առաստաղին հասցնել, որից մանուկը սաստիկ ուրախանում էր, իսկ մալրը անհանգիստ լինում ու ամէն անգամ որ երեխան վեր էր թռչում, ձեռքը մեկնում էր նրա մերկ ոտներին։ Իսկ Պաւէլ Պետրովիչը վերադարձաւ իւր նըր-

բաճաշակ առանձնասենեակը, որի պատերին մոխրագոյն գեղեցիկ պատտառ էր կցարած, պարսկական երփներանգ գորգի վրայով դէնքեր էին կախած. կահ-կարասիքը ընկողի փայտից էր՝ երեսին մուգ-կանաչ կտոր քաշած. սենեակում կալին renaissance-ի ճաշակով շինած հին, սև կաղնուց զրադարան, փառահեղ զրասեղանի վրայ արուրէ արձանիկներ, բուխարի... Նա վեր ընկաւ զահաւորակի վրայ, ձեռները ծալեց գլխի ետեր և մնաց անշարժ, համարեա լուսահատ հայեացք ձգած առատադին։ Արդեօք հէնց պատերիցէլ ուզում էր ծածուկ պահել աչն, ինչոր կատարում էր իւր դէմքի վրայ, թէ մի ալ պատճառով, միայն թէ նա վերկացաւ, պատահանների ծանր վարագույնները բաց թողեց, և նորից վեր ընկաւ զահաւորակի վրայ։

IX

Նորն օրը Բաղարովն էլ ծանօթացաւ Ֆենիչկալի հետ։ Նա Արկադիլի հետ ման էր գալիս պարտիզի մէջ ու նրան հասկացնում, թէ ինչէ պատճառը, որ մի քանի ծառեր, մանաւանդ կաղնիները, արմատ չեն բռնել։

—Այստեղ պէտք է աւելի արծաթատերեւ կաղամախ ու եղէնի, մէկ էլ դուցէ լօրի տնկել ու մի քիչ սևահող աւելացնել։ Տես, զովսնոցը լաւ է եղել, — աւելացրեց նա, — որովհետեւ լասմիկն ու ակացին լաւ թփեր են, շատ մեծապահանջ չեն։ Վահ այստեղ մարդ կալ։

Զովանոցում նստած էր Ֆենիչկան Դուռնաշալի ու Միտիալի հետ։ Բաղարովը կանգ առաւ, իսկ Արկադիլն Ֆենիչկալին, իբրև հին ծանօթի, գլխով արաւ։

—Այս ով է, — հարցրեց Բաղարովը հէնց որ հովանոցի կողքիցն անցաւ։ — Ի՛նչ սիրուն կին է։

—Այդ ում մասին է խօսքդ։

—Ո՛ւմ պիտի լինի՝ — աղետեղ քանի գեղեցիկ կին կալ որ։ Արկադիլն փոքր ինչ չփոթուած կարճ խօսքով բացատրեց, թէ ով էր Ֆենիչկան։

—Ըհը՛, — ասաց Բաղարովը. — Հալոդ իւր բերանի համը իմացել է։ Բալց, ճիշտ եմ ասում, հալոդ ինձ դիւր է գալիս։ Ղոչաղ մարդ է։ Սակայն պէտք է ալս կնոջ հետ ծանօթանալ, — աւելացրեց նա քայլերը դէպի զովանոց ուղղելով։

—Նւգենիւ,— վախեցած կանչեց Արկադիւն նրա ետեից,
—ի սէր Աստուծոյ, զգոյ՛ն կաց:

—Մի լուռուի,—ասաց Բաղարովը,—մենք քաղաքներում
ապրած, եփուած մարդ ենք:

Բաղարովը Ֆենիչկային մօտ գնալով գլխարկը հանեց:

—Թող տուէք ներկայանամ,—ասաց նա քաղաքավարու-
թեամբ գլուխ տալով,—Արկադիւ Նիկալաւիչի ընկերը և մի խո-
նարհ մարդ:

Ֆենիչկան նստած տեղիցը վեր կացաւ ու լուռ նրան էր
մտիկ տալիս:

Ի՛նչ հրաշալի երեխայ է,—շարունակեց Բաղարովը.—Մի
վախենաք, կեանքումս մարդու աչքով տուած չեմ: Այս ինչո՛ւ
են թշերը կարմրել: Ատամ հո չի հանում:

—Այո,—ասաց Ֆենիչկան,—արդէն չորս ատամ է հանել,
իսկ ալթմ ընդերքը դարձեալ ուռել են:

—Հապա մի ցոյց տուէք... մի վախենաք, ես բօխչի եմ:

Բաղարովը գրկեց երեխային, որ ի զարմանս մօր և Դու-
նիաշալի ոչ վախեցաւ և ոչ ընդիմացաւ:

—Տեսնում եմ, տեսնում... Ոչինչ, այմեն բան կանոնաւոր
է—լաւ ատամներ պիտի ունենալ: Թէ որ մի բան պատահի,
իմաց տուէք ինձ: Իսկ դուք ինքներդ առնո՛ղ էք:

—Փառք Աստուծոյ, առնո՛ղ եմ:

—Փառք Աստուծուն—ամենից լաւն է: Ի՛սկ դուք,—աւե-
լացրեց Բաղարովը Դունիաշալին դառնալով:

Դունիաշան, որ աղալի տանը շատ խստաբարոյ էր, իսկ
դուրսը սաստիկ ծիծաղկոտ, պատասխան չտուեց և միայն
փրթկաց:

—Շատ լաւ, վերառէք ձեր հսկան:

Ֆենիչկան մանկանը իւր գիրկն առաւ:

—Զարմանք բան, որ հանգիստ էր ձեր գրկում—ցած ձալ-
նով ասաց նա:

—Բոլոր երեխաներն էլ աղպէս հանգիստ են մնում
իմ գրկում,—պատասխանեց Բաղարովը,—ես դրա զաղտնի-
քը գիտեմ:

—Երեխաներն զգում են, թէ ով է իրենց սիրում,—նը-
կատեց Դունիաշան:

—Աղ բանն ուղիղ է,—հաստատեց Ֆենիչկան.—Այ հէնց
մեր Միտեան. ոմանց ամենեկին չի գնալ:

—Իսկ ինձ կ'զօն,—հարցրեց Արկադիւն, որը մի քիչ ժամանակ փոքր ինչ հեռու կանգնելուց լետով, մօտ էր եկել զովանոցին:

Նա Միտեալին կանչեց իւր մօտ, ուղեց վեր առնի, բայց Միտեան ղրուիւր լետ դցեց ու ճչաց, որով և խիստ շփոթեցրեց Ֆենիշկալին:

—Ուրիշ անգամ—երբ որ ընտելանալ,—ներողամտաբար ասաց Արկադիւն, և երկու բարեկամները հեռացան:

—Ի՞նչպէս էր անունը,—հարցրեց Բազարովը:

—Ֆենիշկա... Ֆեդոսիա,—պատասխանեց Արկադիւն:

—Իսկ հալրանունը՞: Այդ էլ պէտքէ գիտնալ:

—Նիկալանա:

—Bene, ինձ դիւր եկաւ ասի, որ նա շատ չքաշուեցաւ: Մէկ ուրիշը, ով գիտէ, հէնց այդ բանն էլ չհաւանէր: Ի՞նչ լիմարութիւն է. ի՞նչ կալ քաշուելու: Նա մարդ է—դէ իրաւունք ունի:

—Ասենք նա իրաւունք ունի,—նկատեց Արկադիւն,—բայց, այ, հալրս...:

—Նա էլ իրաւունք ունի,—խօսքը կտրեց Բազարովը:

—Է՛, ոչ, իմ կարծիքովս չունի:

—Ինչպէս երևում է աւելորդ ժառանգը քեզ համար մի ասնօրէն էլ դիւրեկան բան չէ:

—Չես ամաչում, որ այդպիսի բան ես մտածում իմ մասին,—տաքացած վրայ բերեց Արկադիւն:—Այդ տեսակէտից չէ, որ հօրս անիրաւ եմ համարում. իմ կարծիքով նա պարտաւոր էր նրա հետ պսակուել:

—Էհ-էհ,—հանդարտ կերպով ասաց Բազարովը:—Ի՞նչ ձեծահոգի մարդ է եղել: Միթէ պսակին նշանակութիւն ես տալիս. քեզանից այդ բանը չէի սպասում:

Երկու բարեկամ մի քանի քալլ լռիկ առաջ գնացին:

—Ես գնացի ման եկալ, հօրդ բոլոր տնտեսութիւնն էլ տեսալ,—նորից սկսեց Բազարովը:—Տաւարը անպիտան, ձիերըն ուժասպառ: Շինութիւնները ծռուել են, բանուորները սարսափելի ծով մարդիկ, իսկ կառավարիչը հո կամ լիմարի մէկն է, կամ խաբեբայ է, այդ դեռ չեմ որոշել:

—Այսօր դու շատ խիստ ես դատում, Եւգենիյ Վասիլիյ:

—Եւ անպատճառ գեղացիք էլ պիտի խաբեն հօրդ: Հո գիտէ ռուսական առածը. «ռուս գեղացին Աստուծուն էլ կ'ծախէ»:

—Ես սկսում եմ հօրեղբորս հետ հասնաձայնել,—նկատեց Արկադիին.—դու բոլորովին վատ կարծիք ունես ուսրաց վրայ:

—Մեծ բան: Ռուսը հէնց նրանով է լաւ, որ հէնց ինքը շատ վատ կարծիք ունի իւր մասին: Գլխաւորն այն է, որ երկու անգամ երկու չորս կանէ, իսկ մնացեալը բոլորը դատարկ բան է:

—Բնութիւնն էլ դատարկ բան է,—ասաց Արկադիին մտախորութեամբ հեռատանի գոյնզգոյն արտերին նայելով, որոնք զեղեցիկ ու քնքով լուսաւորուած էին արդէն բաւական խոնարհած արեւի լոյսով:

—Այն մտքով, ինչ մտքով որ դու ես հասկանում, բնութիւնն էլ դատարկ բան է: Բնութիւնը տաճար չէ, հապա արհեստանոց, իսկ մարդ նրա մէջ մշակ է:

Հէնց արդ միջոցին տան կողմից նրանց ականջին հասան վիօլոնչէլի դանդաղ հնչիւնները: Մէկը, թէպէտ անիրոճ ձեռքով, բայց ղդացմունքով ածում էր Շոբերտի Ակնկալութիւնը, և քաղցրահունչ մեղեդին անող կերպով ղեղւում էր օդի մէջ:

—Ա՛յս ինչ է,—ղարմացած ասաց Բաղարովը:

—Հայրս է:

—Հայրդ վիօլոնչէլ է ածում:

—Այո:

—Բայց քանի տարեկան է հայրդ:

—Քառասուն չորս:

Բաղարովը լանկարծ բարձրաձայն ծիծաղեցաւ:

—Ինչո՞ւ ես ծիծաղում:

—Ախր ինչպէս չծիծաղեմ. քառասուն չորսը եկած մի մարդ, pater-familias, *** գաւառում—վիօլոնչէլ է ածում:

Բաղարովը շարունակում էր քրքշալ. բայց Արկադիին, թէպէտ շատ էլ իւր ուսուցչից ականածելիս լինէր, այս անգամ մինչև իսկ չժպտաց:

X

Մօտ երկու շաբաթ անցել էր: Մարլինսում կեանքը իւր կարգով առաջ էր գնում—Արկադին հեշտանքի մէջ էր, Բաղարովն աշխատում: Տանը ամենքն էլ ընտելացել էին նրան, նրա անհող ձեւերին, նրա հակիրճ կցկառուր խօսքերին: Մանաւանդ Ֆենիչկան այն աստիճանի ընտելացել էր նրան, որ

մի գիշեր մարդ ուղարկեց, որ նրան տեղիցը վերկացնեն՝ Միտեալին ջղաձղութիւն էր պատահել, և Բաղարովը եկաւ և ըստ սովորականին կէս հանաք, կէս լօրանջելով մօտ երկու ժամ նստեց աջնտեղ ու Միտեալին դարմանեց: Մինչդեռ Պաւէլ Պետրովիչը հոգու բոլոր զօրութեամբ ատեց նրան—գոռոզ, լիւր, շնաբարոյ, ստորուկ էր համարում նրան. կասկածում էր, որ Բաղարովն իրեն չէ լարդում և նոյն իսկ համարեա թէ արհամարհում է իրեն—իրեն Պաւէլ Կիրսանովին: Նիկալալ Պետրովիչը երիտասարդ «Նիհիլիստից» վախենում էր և կասկածում էր որ նա կարող լինէր Արկադիլի վրայ բարեբար ազդեցութիւն ունենալ. բայց սիրով ականջ էր դնում նրան, սիրով էլ ներկալ լինում նրա ֆիզիքական ու քիմիական փորձերին, Բաղարովը հետը խոշորացուց էր բերել և ամբողջ ժամերով զբաղւում էր դրանով: Մառաներն էլ էին ՚րան կապուել, չնայելով որ նրանց վրայ ծիծաղում էր—ն, անք զղում էին, որ ինչքան էլ չլինի, էլի նա իրենցից է, աղա չէ: Դու-նիաշան հաճութեամբ նրա հետ խօսում էր, ծիծաղում և ամեն անգամ մօտիցն արագութեամբ անցնելիս աչքի պոչովը խորհրդաւոր հայեացք ձգում վրան: Պետրը, որ մի չափազանց անձնասէր ու անխելք մարդ էր և միշտ ճակատը մտախոհ խորշոմներով էր պատած, մի մարդ, որի բոլոր արժանիքն աչն էր, որ քաղաքավարի կերպարանք ունէր, վանկ-վանկ կարդալ գիտէր և խողանակով էլ լաճախ իւր սերթուկը մաքրում,—մինչև անգամ նա էլ լուռ ծիծաղում էր ու երեսը բացւում էր, հէնց որ Բաղարովը վրան ուշադրութիւն էր դարձնում՝ ընդօժին երեխաները, շան նման, «դոխտուրի» քամակից էին վազում: Մենակ ծերունի Պրոկոֆիչն էր, որ չէր սիրում նրան, ճաշի ժամանակ մօալ կերպարանքով նրան կերակուր էր մատուցանում, աննպաստ անուն տալիս և հաւատացնում էր, թէ նա իւր արտօրուսներով կատարեալ թվի մէջ պառկած խողի է նմանում: Պրոկոֆիչն էլ իւր տեսակին, ազնուական էր և Պաւէլ Պետրովիչից լետ չէր մնալ:

Տարուալ ամենալաւ օրերը հասան — լուսիսի առաջին օրերը, Պատուական եղանակ էր. ճիշտ է, խոլերան հեռուից սպառնալիք էր տալիս, բայց *** նահանգի բնակիչներն արդէն նրա այցելութիւններին սովորել էին: Բաղարովը շատ վաղ վեր էր կենում տեղիցը և երկու, երեք վերստ դնում էր, զբօսնելու չէ—նա աննպատակ զբօսանքը յաանել չէր կարող—արօտ—

ներ, միջատներ հաւաքելու, Երբեմն հետը վերցնում էր նաև Արկադիլին։ Վերադարձին սովորաբար նրանց մէջ վէճ էր ծագում, և սովորաբար Արկադիլին լաղթւում էր, թէպէտ և ընկերից աւելի էր խօսում։

Մի անգամ նրանք սովորականից դուրս ուշացել էին։ Նիկալայ Պետրովիչը նրանց ընդառաջ գնաց պարտէզ և, զովանացին հասնելով, լանկարծ արագ քալերի ձախ ու երկու երիտասարդների խօսակցութիւնը լսեց. զովանոցի միւս կողմիցն էին գալիս և կարող չէին իրան տեսնել։

— Դեռ հօրս լաւ չեա ճանաչում,—ասում էր Արկադիլին։
Նիկալայ Պետրովիչը թագ կարաւ։

— Հարկդ լաւ մարդ է,—ասաց Բազարովը,—բայց արդէն ժամանակից լետ է մնացել, նրա բանը պրծած է։

Նիկալայ Պետրովիչը ուշադրութեամբ ականջ դրեց... Արկադիլին ոչինչ չպատասխանեց։

«Ժամանակից լետ մնացած մարդը» մի երկու վարկեան կանգնեց անշարժ և կամաց կամաց դէպի տուն գնաց։

— Տեսնեմ անցեալ օր Պուշկին է կարդում,—չարունակեց Բազարովը։— Ի սէր Աստուծոյ նրան հասկացրու, որ ալդ դատարկ բան է։ Նրեխայ հո չէ. ժամանակ է անմիտ բանից ձեռք քաշելու։ Եւ թնչ շահ կալ ներկայ ժամանակումս ումանտիկ լինելուց, չեմ հասկանում։ Նրան կարգալու համար մի կարդին բան տուր։

— Ի՞նչ տամ արդեօք,—հարցրեց Արկադիլին։

— Կարծում եմ, որ առ ալժմ լաւ կ'լինի տաս Բիւխների, Stoff und Kraft»ը։

— Ինքս էլ եմ ալդպէս կարծում,—հաւանութիւն տուեց Արկադիլին։— Stoff und Kraft-ը հասկանալի լեզուով է գրած։

— Այլ քեզ բան,—ասում էր Նիկալայ Պետրովիչը նոյն օրը ճաշից լետոյ իւր եղբոր առանձնասենեակում նստած,— ես էլ, դու էլ, եղբայր ջան, ժամանակից լետ ենք մնացել, մեր բանը պրծած է։ Ի՞նչ արած, Գուգէ Բազարովի ասածն ուղիղ է, բայց, ճիշտն ասած, մի բան է միայն սրտիս ցաւ տալիս— լոյս ունէի որ մանուշիկ ալժմս աւելի սերտ, աւելի բարեկամական կապեր կ'հաստատեմ Արկադիլի հետ, բայց բանից դուրս է գալիս, որ ես լետ եմ մնացել, և մենք իրար հասկանալ կարող չենք։

— Ինչո՞ւ պէտք է նա մեզանից առաջ ընթացած լինի. Եւ

